ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» սեպտեմբերի 2019թվական N 96-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաաքացի Տանիմա Ղազանչյանի (ծնված՝ 1962թ.) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել Տանիմա Ղազանչյանին, Հրանտ, Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոցի թիվ 28 հասցեի տնամերձ հողակտորում 2007 թվականին ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 05082019-07-0122 վկայական, «Վալերիկ Գալստյան» ԱՁ-ի կողմից 2019 թվականի օգոստոսի 5-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Վալերիկ Գալստյան» ԱՁ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Տանիմա Ղազանչյանին, Հրանտ, Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոց թիվ 28 հասցեի տնամերձ հողակտորում 2007 թվականին ինքնակամ կառուցել է օժանդակ շինություններ՝ Տարտ=3.84 քառ.մետր, Տարտ=38.54 քառ.մետր, աստիճան՝ Տարտ=0.82 քառ.մետր, սանհանգույց՝ Տարտ= 2.16 քառ.մետր:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Տանիմա Ղազանչյանին, Հրանտ, Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոցի թիվ 28 տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

որոշում եմ.

1.Տանիմա Ղազանչյանին, Հրանտ,Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոց թիվ 28 հասցեի տնամերձ հողակտորում կառուցված օժանդակ շինությունները՝ Տարտ=3.84 քառ.մետր, Տարտ=38.54 քառ.մետր, աստիճանը՝ Տարտ=0.82 քառ.մետր, սանհանգույցը՝ Տարտ= 2.16 քառ.մետր ճանաչել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 57153 (հիսունյոթ հազար հարյուր հիսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը :

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

6.Ուժը կորցրած ճանաչել Մայակովսկի համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 22-ի «Ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին» թիվ 77-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.սեպտեմբերի 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» սեպտեմբերի 2019 թվական N 97-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի,

որոշում եմ.

1.Քաղաքացի Հայկ Պետրոսյանին տալ բնակելի տան, ավտոտնակի և քարե պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի համայնքի 15-րդ փողոցի թիվ 6/5 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Հայկ Պետրոսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.սեպտեմբերի 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» սեպտեմբերի 2019 թվական N 98-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով,

որոշում եմ

1.Քաղաքացի Մինաս Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող 15-րդ փողոց, թիվ 37 հասցեի հողամասում (կադաստրային ծածկագիր 07-043-038-003) տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.սեպտեմբերի 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» սեպտեմբերի 2019 թվական N 99-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով,

որոշում եմ

1.Քաղաքացի Ենոք Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող 15-րդ փողոց,6-րդ փակուղի թիվ թիվ 8 (կադաստրային ծածկագիր 07-043-00041-0004) և 15-րդ փողոց,6-րդ փակուղի թիվ թիվ 10 (կադաստրային ծածկագիր 07-043-00041-0005) հասցեի հողամասերում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ քարե պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.սեպտեմբերի 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» սեպտեմբերի 2019 թվական N 100-Ա

«ՍԱՄՎԵԼ ՍՈՂՈՅԱՆ» ԱՁԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 55-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «Սամվել Սողոյան» ԱՁ-ին Մայակովսկի համայնքի 3-րդ փողոց 22/1 հասցեում տալ 1մ^2 մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2019 թվականի սեպտեմբեր ամսվա համար.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.սեպտեմբերի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» սեպտեմբերի 2019 թվական N 101-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի գյուղապետարան է դիմել համայնքի բնակիչ Վերժինե Մկրտչյանը հայտնելով , որ իր որդին՝ Հովսեփ Հարությունյանը / ծնված 2006թ./ միակողմանի ծնողազուրկ է, սովորում է քաղաք Աբովյանի էստրադային և ջազային արվեստի ստուդիայում և նրա ուսման վարձը կազմում է 53200 դրամ , և խնդրում է կատարել որոշակի դրամական փոխանցում :

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետի պահանջը. ***որոշում եմ՝***

1. Կատարել փոխանցում Հովսեփ Հարությունյանի անունով 30 000 / երեսուն հազար / դրամ ուսման վարձ՝ <<Արարատ Բանկ>> ՓԲԸ , 1510025233800100 հաշվի համարին :
2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հարությունյանին կատարել փոխանցում :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.սեպտեմբերի 12